

#### 5.4. ՀՀ տարածքի 2003թ. մայիսի հիդրոտեղերևութաբանական պայմանների բնութագիրը

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, մայիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը ՀՀ տարածքի գերակշռող մասում բարձր է եղել նորմայից 1-2<sup>0</sup>C-ով (Իջևանում՝ 3<sup>0</sup>C-ով): Լեռնային և նախալեռնային շրջաններում այն տատանվել է +10 +13<sup>0</sup>C (Աշտարակում՝ +18<sup>0</sup>C), Արարատյան դաշտում, Սյունիքի և Տավուշի հովիտներում +17 +19<sup>0</sup>C սահմաններում:

Մայիսի 1-2-ին, 8-9-ին օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 3-5<sup>0</sup>C-ով, 7-ին՝ 6-9<sup>0</sup>C-ով: Լեռնային շրջաններում նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է -1 -6<sup>0</sup>C, նախալեռնային շրջաններում՝ -2 +3<sup>0</sup>C (Աշտարակում +6 +9<sup>0</sup>C), Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում +2 +7<sup>0</sup>C:

Մայիսի 4-5-ին, 12-14-ին և 26-ին օդի օրական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 3-5<sup>0</sup>C-ով: Այդ օրերին Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում առավելագույն ջերմաստիճանը հասել է +26 +31<sup>0</sup>C, նախալեռնային շրջաններում՝ +21 +25<sup>0</sup>C և Լեռնային շրջաններում՝ +18 +23<sup>0</sup>C:

Մայիսին միայն 7 օր տեղումներ չեն դիտվել: Ամսական տեղումների քանակը Արարատյան դաշտում կազմել է նորմայի 38-67%-ը (Արարատում՝ 13%-ը), Կոտայքում՝ 41-42%-ը (Հրազդանում՝ 99%-ը), Տավուշում, Շիրակում, Լոռիում 50-80%-ը (Տաշիրում 109%-ը), Սյունիքում՝ 124-155%-ը (Մեղրիում՝ 76%-ը), Ջերմուկում, Գեղարքունիքում այն նորմայի սահմաններում է եղել՝ 91-104%:

Մայիսի 6-7-ին, 14-16-ին և 31-ին ուժեղ քամի գրանցվել է Լոռիում, Արարատում, Ապարանում, Սևանում, Արտաշատում: Քամու առավելագույն արագությունը հասել է 15-19 մ/վրկ: Մայիսի 7-ին՝ Իջևանում, 19-ին՝ Սիսիանում, 20-ին՝ Եղեգնաձորում, 27-ին՝ Տաշիրում և 30-ին Ապարանում դիտվել է կարկուտ:

Մայիսի 31-ի դրությամբ ձյան ծածկը պահպանվել է Արագած բ/լ կայանի շրջակայքում:

Մայիսին հանրապետության գետերի մեծ մասում ջրի միջին ամսական ելքերը մոտավորապես կազմել են նորմայի 110-130%-ը:

Սևանա լճի մակարդակը ամսվա ընթացքում բարձրացել է 23 սմ-ով և 2003թ. մայիսի 31-ի դրությամբ կազմել է 1897.34 մ, որն 2002թ. նույն օրվա համեմատությամբ բարձր է եղել 55 սմ-ով:

**ՀՀ Ազգային վիճակագրական  
ծառայության նախագահ**

**Ս.Մնացականյան**